

ՀԱՆԴԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵԳԻՊՏՈՍ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Պեղինու վեհաժողովէն յետոյ ամեն ազգ կարծեսթէ դիշերային մմժութեան մը մէջ ընկղմեալ, կը դիտէր քաղաքական իրաց ընթացից երկինքը, իւրաքանչիւր ոք նշմարելով հօն իւր տկը կաղաքալ պայցառութեան ասադն. ոմն իր ազատութեան ըցմն, ուրիշ մը իրեն քաղաքականութեան զարգացումն, այլ ոք իրեն վրայ ծանրացեալ բռնութեանց և հարատահարութեանց լծոյն թեթեցընելն, և ուրիշներալ իրենց ծագելիք նորանոր շահուց ճառագոյիժներն. և ահա այս ամեն դիտողաց աչքերը յանկարծ կը յափշտակուին շացութեամբ՝ յակամնյս թողով իւրաքանչիւրն իրեն ասադը, նորօրինակ ասուպի մ'երեննալուն, որուն տեսզութիւնն ասկայն ասուպի նման ՚ի վայրկենի պիտի շանհետանայր, ըսել կ'ուզեմ' որ երբ ամենայն ոք իր ազգային խնդրոյն կամշահուն ակնկալութեանից զրաղաձ՝ զոյն ձեռքբերելու շանից մէջնէր, ժագեցաւ ահա եզիպտական իրենդիրն, և հասարակաց մտադրութէր զրաւելով, առ ժամանակ մի մոռցընել տրւաւ, կամբոլորովինն և կամքէթ մի մասամբ միւս ամեն խնդիրները: Արդեօք յիրաւի ասուպ մ'էր այս խնդիրս, որ յանկարծակի քաղաքականութէ մըթնողրտին մէջ մտաւ, թէ արդեօք այն հաստատուն ասազերէն մին, որ Պեղինու ժողովոյն խիս և խորհրդաւոր ամպերուն ներքեւ ծածկուած, և ժամանակին պատառելով իւր քօղն՝ աշաց ներկայացաւ իրեն քափանդակ պայծառութեամբն. արդարն իննդիր մ'է այս, որոյ լուծումն ապագայն պիտի որոշէ, թէպէտ և ոչ անհաւանական երեխ մե-

զի, թէ եզիպտական խնդիրն ըլլայ այն հաստատուն և նախավճիռ քայլերէն մին՝ ՚ի լրումն լուծման լրեելեան խընդույն:

Ինչ ալ որ համարելու ըլլանք, այս յայտնի է՝ թէ որ և իցէ խնդիր կը ծագի ունելով իրեն արտաքին պատճառներն, կամ լու ևս պատճառանքներն, ինչպէս ալ ախորժելու ըլլայ մէկն անուաննել: — ի՞նչ էր ուրեմն նաև եղիպտական խնդրոյն արտաքին պատճառն, կամ ուստի ծագեցաւ խնդիրն և հակայսպայլ յառաջնց:

* *

Ամեն քաղաքական խնդիր կը ծագի երկու կամ աւելի ազգաց կրկելիք մնասէ և կամ ձեռք բերելիք շահէ մը. Եղիպտասի նկատմամբ շահ ստանալու յօս ունեցող մասին կը վերաբերին երրոպական տէրութիւնք, իսկ մնաս կրկելի մասին թուրքիա: Եւրոպական պետութեանց ունենալիք շահն երկու կետի կրնայ վերածուիլ, նախ ազատ անցք Սուեզի ջրանցից՝ ամեն ազգաց վաճառականականնաւերու, և երկրորդ յատկապէտ եղիպտասի վաճառականութի: Առաջնոյն նկատմամբ ամեն ազգաց շահն զրեթէ հաւասարազօր է, որով ըզնոյն պահպաննելու և ածեցընելու համար հաւասարապէտ կ'աշխատին Անդզիացիք և Գալզիացիք, Աւստրիա կամ խոտայիա, և այն. բայց երկրորդ մասին գալով այս ազգաց ամենուն ուշադրութիւնն հաւասարապէտ չի գրաւեր: Եղիպտոսի մէջ Եւրապացիք իրենց ապրուստն կը ճարթեն իրենց առած զարգացման շարժմամբ, և եւրոպական ձե-

ռագործք և արուեստական վաճառք ուրիշ անձանցմէ չեն սպասիր և պիտի չսպասին՝ բայց միայն յլրոպացւոց։ Եղիպտոսի կիմայն դրեթէ անկարօս կընէ այս ձեռագործաց Եղիպտացի բնիկ Ֆելլահն, որոն վրայի կրած շապիկն ինքնին իր երկրէն ելած բամբակէն կը շինէ, և նիլսի կաւէն կը կազմէ իրեն պէտք եղած կահ կարսափն, նայնպէս նաև կերած բրինձն և արմաւն Եղիպտոսի արդինք են։ Եւրոպացւոցմէ ընդունած միակ բանն է ուրեմն երկաթ և պղինձ, զորս 'ի գործ կ'առնու իրեն անհրաժեշտ նղած անօթոց կազմութեանն համար։ ուստի կը տեսնուի յայտնապէս, որ Եղիպտոս բացարձակապէս վաճառք դուրս հանող երկիր մ'է և ոչ ընդունող, կամ բատչանաեսպատաց խօսելով ելից երկիր է և ոչ մոից։

Եղիպտոսի ունեցած գլխաւոր վաճառքն է բամբակ ու բրինձ, որոնք գրեթէ ամբողջապէս Անդղիա կը տարուին, մանաւանդ բամբակն . ուստի յայտնի է որ մինչդեռ մէկ կողմէն եւրոպացի բնակիչք կը պակասին յԵղիպտոս, միւս կողմէն համեմատաբար Եւրոպիոց վաճառականութեան ասպարէզն կ'ամփոփուի, և բերք մոցցնելու շահու զուռն կը նուազի։ Կը հետևի ուրեմն այս խորհրդածութենէս՝ որ Եղիպտոսի շահն աւելի Անդղիոց կը վերաբերի քան ուրիշ որ և իցէ ազգի, Այս կէտո խնդրոյն սկիզբէն 'ի վեր ուշադրութեան նիւթը ըրաւնակ Գաղղիա, որով թողուց Անդղիոց գործոց աշատ ասպարէզ, զրադելով միայն իր նոր ժառանգութեանն 'ի Դուռնուզ, ուր կը գտնուի իրեն շահուց աղբիւրը, Արդ շահուց խնդիրն այսօրինակ զրութեան մէջ զտնուելով, յայտնի է թէ որ և իցէ խնդիր ծագելու ժամանակ Եղիպտոսի մէջ, աւելի կամ դրեթէ միակ Անդղիոց ուշադրութեան նիւթպիտի ըլլար, քան ուրիշ որ և իցէ ազգի։ Խամայիլ Խըտիվի հրաժարմամք՝ Անդղիացիք և Գաղղիացիք դրեթէ լիազը կամ բացարձակ գործող հանդիսացան Եղիպտոսի վարչութեան մէջ,

որոյ զրտանական մատակարարութիւնն իրենց ձեռքը մնացեր էր, և կենսական խնդրոց լուծումն միշտ կապակցեալ էր իրենց շահուն հետ։ Ըսդ որ թէպէտ և մեծապէս դժկամակ էր բուն վարչու-



ՓՈՒԱՆԱԿ ՇՈՎԱԿԱԼԻ, ՍԻՐ Փ

Ըսդհանուր հրամանառար անգյուղ

թիւնն , տեսներով իր հովոնւցին անհետ ըլլուն յԵզիպառաէ , այլ զօրութեամբ ուժոյ չէր կարող ցուցընելու իրեն գմկամակութիւնը : Բայց այսու հանգերձ ազդայնութեան՝ կամ շաւ և ը-

սել կրօնական տտելութեան ողի մը կը միացընէր ընկճնեալ ֆէլլահայ սրաերն , և կը սպասէր յարմար առմի դուրս զեղանելու զայն իրեն բովանդակ թափով : — Յիրաւի աներկրայ պէտք է համարինք՝ որ քաղաքականութեան կատակերգութիւն մ'էր Եզիպառոսի մէջ սկըսածն , որ ահաւոր ողբերգութեան մը կատարածն ունեցաւ : Ժողովուրդ մը՝ որ վախտոն և աւելի դարերէ ՚ի վեր զուրկ մնայեր է ինքնիշխան վարչութենէ , և յանկարծ այսիր թէմբրութենէն կ'արթընայ իբրև նոր ոմն եպամինոնդ ազդայնութեան վրէժինդրութեան ոգւով բորբոքած , այս կատակերգութեան մասն է . բայց երբ յայտնի կ'ըլլայ՝ որ այս ազդայնութեան ոգին , այս վրէժինդրութեան բոցն բորբոքողն ուրիշ բան չէ , բայց միայն առանձնականի մը կիրքն ու ատելութիւնն , որ ամեն օրինայ և իրաւանց դաշնք , քաղաքներ , գեղեր կ'այրէ , կը մրկէ իւր ատելութեան և կրից բոցով , երեան կ'ելլէ այն ժամանակ ահաւոր ողբերգութեան մը ախուր վերջաւորութիւնն , կազմելով այս կերպով Շեքսրիթի հրաշալի և քսանմելի , զըւարթ և միանդամայն ախուր թատերական տեսարանաց երևոյթ մը :

Տարակոյս չկայ որ Տարուինի կենաց ձգան (Struggle for life) գրութիւնն ընդհանուր է աշխարհին վրայ . յորմէ երկու արգասիք միայն կը յառաջանան , այսինքն է կամ այն է որ զօրաւորն զակարը բոլորովին կ'ոչնացընէ , և կամ իրեն շահուն համար կը խնայէ անոր կենաց : Այս սկզբամբ է որ մարդիկ կը պահեն միայն այն կենդանեաց կեանքը , զօրոնք յետ ընտանեցնելու կըրնան իրենց յօգուռ ՚ի կիր ածել . և այս է ահա կենդանեաց գերութիւնն : Այս վիճակիս մէջ կը գտնուի հիմա յիրաւի ֆէլլահներու ցեղն . թշուառ վիճակ մարդարե . բայց կարելի չէ հետեւցնել թէ կրնան ուրեմն իրենք իրենցմէ թօթափել ուղած ատեննին այս լուծն , յառաջ գալ քաղաքականութեան մէջ ,



ԴԵՐԻԿՈՍ ՊՈՅԱՆ ՍԻՑՄՈՒՐ
ԱՆԱԼԱՏՈՐՄՂԻՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ :

Հասնիլ այն զարգացմանն և բարօրութեան, յորում կը վայելեն քաղաքականացեալ և ազատ ժողովուրդը՝ նոյն խոկ Եղիպտոսի ունեցած վիճակն այս զարգացմանն արգելը է. հօն կ'աճին, կը բազմանան Եւրոպացիք առանց խառնըրդի բնիկ ժողովրդեան հետ. որով բազմաթիւ գարերէ ՚ի վեր ֆէլլահն կը գանուի գարձեալ այն վիճակին մէջ, յորում կը գտնուէր Փարաւանաց ժամանակ: Փորձ փորձեց յիրաւի Ապուդ կը թելու. այս ժողովուրդն, և այս փորձոյն հետևանք երեցաւ Արապի պէյն: Բայց Արապի պէյ առաջին ֆէլլահն շեղաւ, որուն ձեռքն անցնի Եղիպտոսի բախտն. իրմէ առաջ ուրիշ ֆէլլահ մը առնուանին Մուֆթիչ, աղնոտավի ձեռնարկութեամբը յարիտենական արտասուաց դատապարտեց իւր ժողովուրդը: Նոյնպիսի բախտ մ'առնեցաւ նաև Արապի, որ նախբնիթաց Խօրտիի ժամանակ իշխանութեան հասնելով գլուխ կեցաւ Եւրոպական մասին հակառակ կողման կամազգայնուրեան. ընտրուելով պաշտօնեայ պատերազմի՝ բանակին մէջ մը տուց անթիւ բազմութիւն մը ստրուկ և ողարմելի մարդկանց, որոնցիւ կազմեց նաև սպայից խումբ մը, որմնք անգէտ էին ոչ միայն պատերազմի օրինաց, այլ և իրենց աջն ու ձախն անգամ որոշելու. ուստի և հարկ իսկ էր որ կանոնաւոր զօրաց բանակի մ'առաջն խսպառ ցիր ու ցան ըլլային:

* *

Եղիպտական խնդրոյն մէջ շահուց և վնասուց, առելութեան և անսր պատճառաց մասերը զիտելէն, յետոյ՝ մինչեւ հիմա ըրած խորհրդածութեամբ, անցնինք ուրեմն քննելու խնդրոյն յառաջնադարձութեամբ, այսինքն՝ թէ ո՞վ էր Արապի, որո՞նք էին իր կողմինակիցներն, ինչ էր նպատակն, ինչպէս սկսաւ խնդիրն, ինչ յեղյեղումներ կրեց և ինչ վերջ ունեցաւ:

Անշուշտ փափաքելի է ընթերցողաց թարթերութենէ մ'առաջն զայն ներկայացընող գիւցազն կամ զիսաւոր ան-

ձանց ծանօթութիւնն ունենալ. արդեղիպտական աხսարանին հանգուցի լուծման ժառայող անձինք զիսաւորապէս երկեց եղան, — Արապի, Սիյամուր, և Ուզլէյ:

Այսիւ Ահմէտ Պէյ Արապի ծնած է 1836ին, Ստորին Եղիպտոսի Շարքիէ նահանգին մէջ, և հօր կողմանէ Մահմետի ցեղին սերունդ կը համարի զինքն, որով և սրբազն տոհմէ: Եղիպտական բանակին մէջ մանելով՝ Քիւ ժամանակ էին փոխանորդ հազորապէտի կարգեցաւ. բայց այլ և այլ անիրաւ հալածանքներ կրեց, որով և թշնամի եղաւթէ Տաճկաց և թէ օտար ազգաց, և սիրելի անձն Եղիպտակի բնիկ ժողովը. գեան, Եւ Եւրոպայուց Եղիպտոսի զրամական վարչութեան միջամտութեանն հակառակելով, զլուխ կեցաւ. իրմէ զըրգուած ազգային Եղիպտական մասին՝ հակառակ Խօրտիի, բանադատելով ըզփոխարբայն փոխելու իւր վարչութեան կերպը, և իրեն հետ միանալով մերժելու զերոգացիս՝ ՚ի զրամական վարչութենէ Եղիպտոսի. ուստի ծագեցաւ ներկայ պատերազմն, որուն մէջ զըրշմեալ կը առեմնենք իւր վերջին թշուառ օրերը:

Եիր Փրեգերիկ Սիյամուր, առաջին ծովակալ անդղիսկան նաւատարմին Միջերկահանի մասին, հիմայ 62 առթուան հասակին մէջ է, (բազմաթիւ լլադիրք Գաղղիոյ և Խոտիսի զինքն 81 տարուան հրատարակեցին, շփոթելով ուրիշ Սիյամուրի մը հետ), յնաւ 1821ին. տասուերեք տարուան 1834ին մտաքրիանից ծովային զինուորութեան մէջ, և սպայ ընտարաւեցաւ. ՚ի 1843: Համբաւ ստացաւ 1852-53ի Պիրմանաց պատերազմին մէջ, և 1854ին թուսաց գէմ կոռեցաւ Սպիտակ ծովան վրայ, և 1860-61 երսելի հանգիսացաւ. ՚ի նոր Զելանտա: ՚ի 1862 անդամը ընտրուեցաւ ծովային բարձրագոյն խորհրդարանին. իսկ 1880ին հրամանատար ըլլազվ. ՚ի Տուլինիոյ ուղարկեալ նաւաց իր անունն

Երբապայի ծանօթացաւ, և ներկայ պատերազմին մէջ Հրամանատար ընտրուելով Անդղիական նաւատորմին. Աղեք սանդրիոյ գնդակակոծութիւնն իր համբաւն աւելի ևս տարածեց :

Եղիպատոս ուղարկուած անգդիական բանակին հրամանատարն, Թէլ-Էլ-Քէպիրի յաղթական դիւցազն է՝ Սիր կարսէ Յովսէփ Ռւկլէյ, իուլանտացի ուղղափառզօրապետի մը որդիւնաւ Ծըլլինի շրջակայթը՝ ի 4 յունիսի, 1833, և 1852ին անդղիական բանակին մէջ մտաւ իրրեն դրօշակիր հետեւակազօր 80դ գնդին. մի ևնոյն տարւոյն մէջ մասն ունեցաւ Պիր մանաց պատերազմին մէջ, և ի 1855 նշանաւոր հանդիսացաւ իրիմի պատերազմին մէջ, յորում յեւաստարովի քով զանազան անգամ վերը ընդունեցաւ : — 1855էն մինչեւ ի 1858 իրրեն հրամանատարի փոխանորդ՝ Երևելի եղաւ իր քաջութեամբքի Հնդկաստան, և 1860ին մասնակից գտնուեցաւ Զինաց պատերազմին : Հրամանատար ընտրուելով՝ ի 1867, ուղարկուեցաւ՝ ի Գանատա և ընդդէմ ապստամբաց կարմիր-գետոյն. և հօն ցուցած արդեանցն փոխարէն ասպետութեան պատուանցն ընդունեցաւ : Յամին 1873 ընդդէմ Աշանգաց կատարած յաղթութեանն ի փոխարէն Անդղիոյ խորհրդարանէն 20,000 սպեռլինաց վարձք ունեցաւ, և լինորա զինքն իրրեն իրեն քաղաքակից պատուեց : Յամին 1879 առաջին հրամանատար ընտրուեցաւ Զուլմաստանի պատերազմին մէջ, թէպէտ և իր հօն հասնելէն առաջ ուրիշ մ'ունեցաւ զջէդդիվայոյ գերի բռնելու պարձանքն : Բաց ՚ի զինուորական այս քաջագործութիւններէն, նաև վարչութեան մէջ նշանաւոր տազանգ ունի, որով 1874-1779 մեծամեծ կարգադրութեանց հեղինակ եղաւ անդղիական գաղթականութեանց մէջ, ՅԱնդղիա գառնալով՝ ի 1880, քիչ առենքն օգնական զօրավար բանակի անուանեցաւ : Սիր կարնէ Ռւկլէյ ձգիչ կերպարանք և վարմունք ունի, քաղցրաբարոյ, համեստ և բարեսիրտ. և ընու-

թիւնն չէ զլացեր իրեն ձիրք մը, որ շատ մեծամեծ մարդկանց բաժինն եղեր է, այսինքն է՝ հասակի կարճութիւնն : Հրամարակած է նաև քանի մը փայլուն և շահաւելու մասենագրութիւններ գինուորական իրաց վրայ :

* *

Ինչպէս ՚ի սկզբան յիշեցինք, անցեալ տարւոյն սկիզբէն ՚ի վեր եղիպատացի ժողովուրդը ազգային և հակագային անուամբ երկու կուսակցութեց բաժնուած էր, և այս երկու կողմանուց ցրայօք հետեւեալ կերպով կը գրէը Վարակն Արապի փաշային օրագիրն :

« Ազգային մասը կազմողներն են :

1. « Էլ-Ազար մզկիթին և Գահիրէն և ուրիշ քաղաքաց մէջ իրենց ընթացքը ըլքն աւարտած ուսումնական անձինք : — Էլ-Ազարի մէջ ուսանողաց թիւն՝ իրենց ուսուցչաց հետ մէկտեղ առած՝ կը հասնի 46,000ի, և ամենքն ալ, ՚ի բաց առեալ 25 շէյխ, ազգային մասին կողմն են :

2. « Վաճառական և խանութպատն Արաբներն :

3. « Ամեն վաճառաշահութեան պարապող, կարգաւալ դրեւ գիտցող, և օրագիր կարգալու սովորութիւն ունեցող ընկի Եդիպտացիք :

4. « Գեղերու զիխաւորք և անոնց ստորակարգեալ պաշտօնեայք :

5. « Ղատի քրիստոնեայք, որոնց թիւլըն կէս միլիոնի կը հասնի :

6. « Բովանդակ բանակն, ՚ի բաց առեալ սակաւաթիւ խորմք մը չէրքէզ սպայից :

7. « Բավարքականութենէ բան հասկցող Ֆէլլահներն . այսինքն անոնք, որ իրենց գեղերուն մէջ իմաստուն մարդիկ կը համարուին, որոնք յոյս ունին թէ Արապի փաշա պիտի ազատէ զիրենք ունեցած պարտքերնէն և միշտիրներու բանութիւններէն : — Ֆէլլահներն առհասարակ կ'ատեն զջամճիկս, իսկ զիւրոպացիս մի մասն կ'ատէ և միւսն կը սիրէ :

8. « Բեհերա գաւառին Արաբներն,

որոնք մեծ մերձաւորութիւն ունին գետուիններուն հետ բաւն զետուիններն կ'ատեն զժէլլահս և զվարութիւնն . պատերազմի ժամանակ անոնց հետ կը միանան, բայց խաղաղութեան ատեն ամեննեին զինուորական կախմունք չունին անոնցմէ :

« Այս ազգային մասին թշնամիք են .

1. « Մէջմէտ Ալի փաշային տոհմն , Տաճիկներն ու Զէրէզներն . Նմանապէս քանի մը Հարսւստ եղիպտացի տոհմեր , որոնք յստ ունին իսմայիլի վերահաստատւելուն . նոյնպէս նաև Երբապացոց հետ վերաբերութիւն ունեցող Եղիպտացիք , որոնք գաղղիերէն կը խօսին , ու 25 չէլլս , որոնք Խըտիվի հետ միաբանած են :

2. « Այն Զէրէզներն , որոնք յառաջ կու գան վերջին դարու մէջ Եղիպտասի տիրող Մէմուքներէն : — Զէրէրէզներն ու Տաճիկներն շատ հարսւստ են , բայց իրենց թիւն 45,000 չանցնիք :

3. « Յոյնք , որոնք մեծաւ մասամբ լումոյափոխ են , նոյնպէս նաև գեղացի վարձուորաց տեարք : — Յունաց գաղթականութիւնն 30,000 անձանց կը հասնի :

4. « Ասորի քրիստոնեացք , զորս յԵղիպտոս գալթեցուց իպրահիմ փաշայ , իւր վերջին փառաւոր յաղթութենէն վերջը : — Իսն մէջներէն բազմաթիւ անձինք , որոնք քսան տարիէ 'ի վեր յԵղիպտոս կը բնակին , և մեծաւ մասամբ գրամափոխներ են և Երոպական զիւանատանց մէջ ծառացողք :

5. « Երոպացիք , որոնք հետեւալ կերպով կը բաժնուին . — 14,000 իտալացիք , 14,000 Գաղղիացիք , 3,500 Գերմանացիք և այլ ազգեր . բովանդակն 'ի միասին գրեթէ 36,500 անձինք : Գրլիսաւորապէս Երոպացիք են ազգային մասին ոխերիմ հակառակորդք , մանաւանդ Գաղղիացիք : Անդիմացիք , որոնք եօթը տարիէ 'ի վեր զԵղիպտոս իրենց իրենց ժառանգութիւն մը կը համարին , և այս ազգային մասին զօրանախ իրենց բովանդակ յոյսը կ'ոչնչացընէ :

Իտալացիք երկու մասի բաժնուած

են . մի մասն հակումն ունի ազգային Եղիպտական կողման , աւելի Գարդիաց և Անդրդիոյ հետ ունեցած նախանձորութեան պատճառաւ . իսկ միւսն նոյնպէս ազգային մասին կը պատկանի , իրքեազատպահ աղատութեան ազգացաց միլլարնն . իսկ արաբերէն խօսող իտալացիք , ինչպէս են Մարգարացիք կամ Մալդէզներն , ամենն ալ առհասարակ եղիպտական ազգայնութեան կողմն են :

« Ամերիկացիք , Պերճիացիք և ուրիշ ազգեր սակաւաթիւ են , և ընդհանրապէս ազգային մասին հակումն ունին » :

Ահաւասիկ անկողմնասէր յայտարարութիւն մը Եղիպտասի բնակչաց գրութեան , ուստի յայտնի կ'երթի որ իսմայիլի մեկնելէն յետոյ Երոպացոց թիւն Եղիպտասի մէջ շատ նուագիր է , մանաւանդ Գաղղիացոցն , որոնք երբեմն կրկնի էին քան ինչ որ են հիմա , և երթալսվ պիտի նուազի վերը յառաջ բերած պատճառաւ համար :

* *

Ազգային մասն իր մտածմանց դորձադրութիւնն սկսաւ հետեւալ կերպով : Յամին 1881 , սեպտեմբեր 9 , 4000 զինուորք , 30 հրանօժիւք , կը պաշարեն 'ի Գանձիրէ իրատիվ պալատը , այլ և այլ պահանջմանը ընելով նախարարական վարչութեան փոփոխման նըրկատմամբ , և զօրաց թուոյն տւելնալուն : Այս ապատամբութեանն գլուխ կեցեր էին չորս հազարապէտք , որոնց մէջ առաջին էր Արապի պէտ : Խըսովիվ ստիպեցաւ կատարել անսնց կամքը , ըստելով նախարարաց ժաղովն , և ըստ իրենց կամուց նախագահ դնելով՝ նոր կազմեալ ժողովոյն զԵրիթ փաշա , որ ազգային մասին գլուխ անցնելով 'ի սկզբան շատ խստառ մենքը ըրաւ անոնց խնդիրները կատարելու , բայց չկրցաւ զիրենք դոհումն , թէպէտ առ ժամանակ մի կրցաւ խաղաղողել ապատամբաց մեծ մասն , այլ սակայն այս խաղաղութիւնն տեսական չէր կարող ըլլալ :

Այս գէպքս յայտնի է չէր կարող

լինդիսից և գաղղիոյ ուշադրամթեան մեծապէտ նիւթ ջըլլալ, ուստի և սկսան իրենց բարձրագոյն իշխանութիւնն էր զիապոսի վրայ ցուցընել, լրկու գաշնակից տէրութեանց բանած այս ընթացքն թուսւից բազորոյն նիւթ եղաւ, որով կը ծանուցանէր՝ թէ Եղիպտոսի խնդիրն լոկ անդզիւկան կոմմ զազզիւտ կան իննդիր մը չէր, այլ մեծ վերաբերութիւն ունէր Արենեցան խնդրոյն հետ: Բարձրագոյն Դուռն յարմար առիթ համարեցու այլը նախանձորդութեան ժամանակ ցուցընել՝ թէ Եղիպտոսի վրայ գերազոյն իշխանութեան իրաւունքն իրեն կը պատկանի, ուստի ուզարկեց երկու զործակատար պաշտօնեաներ Եղիպտոս, զլի ֆոււտ Պէյ և զիւզամ՝ փոշա, յանձնելով անոնց քննելու Եղիպտոսի վարչութեան ընթացքն, հաստատելու Խըտիվի իշխանութիւնն ենախիլին խաղաղութեան վերածելու զերկիրն: Զոր տեսնելով՝ Անդզիւտ և Գաղղիա միացած ծանուցին Բարձրագոյն Դրան, որ ամենին չեն հանդուրժեր իրենց Եղիպտոսի դրամական վարչութեան մէջ ունենցած իրաւունք և իցէ կերպիւ նուազելուն. ուստի և երկու պատերազմիկ նաւ կ'ուղարկեն գէպ յլլիկընանդրիա. կը բըռնադատուի յիսո կոչելու Տաճկաստան խր պաշտօնեայըը, և երկու նակն կը մեկնին: Վերասին այս կերպով Անդզիւտ և Գաղղիա առաջ գործոց գործոց ասպարէցն ազատ մարզի, Կ'իմանցընեն խրտիվն, թէ որ և իցէ ազդի միջամտութեան գէմ պիտի պաշտպանեն զինքը, և այսու կը ծանուցանեն իրենց միտքը առ Սուլդանն և առ զիսաւորո ազդային մասին, որոյ առաջնորդ էր նոյն ինքն Արապի Պէյ պաշտօնեայն պատերազմի:

Տաճկաստան անկարող ըլլալով զօրութեամբ զինուց մաքառելու իր ահաւոր թշնամեաց գէմ, բողոք կը բառնայ առ Եւրոպական տէրութիւնս, իրեն Եղիպտոսի վրայ ունեցած զարաւոր իրաւունքը բանաբեալ ցուցընելով երկու դաշնակից տէրութիւններէն. և այս բողոքն կը գտնէ Եւրոպական միւս չօրս

մեծ տէրութեանց սենեկաց մէջ իւրաքանչաւոր ունկնդրութիւնն:

Այս միջոցին կամպէդայի խորհրդարանին անկումն կը յեղուփոխէ նաև Եղիպտական խնդիրն. Ֆրէսինէի վարչութիւնն ոչ իր նախորդին յանդուգն թափով գործելին ունի, և ոչ այս լինդրոյս նկատմամբ անոր մտածմանց համախնչ կ'երեսի. ուստի և կը հրաւիրէ Անդզիւտ հետ համաձայն նաև միւս չորս մեծ տէրութիւնները, զիւսւիա, գիւրմանիա, զիւսարիա և զիստափիա, մասնակցելու Եղիպտական խնդրոյն, ըստ իրենց բողոքանացն:

* *

Սակայն Եղիպտոսի մէջ ծագած խոռովութիւնն հակայաքայլ կը յառաջէր: Փոխարքայն չէր ուզել յանձնն առնուլ սոորագրելու չէրքէղ սպասից զատառատանի մը նկատմամբ Արապի Պէյի վըճիրը. կը բողոքէ առ Սուլդանն, բայց միւս կողմանէ առ զեսպանս Եւրոպայի կ'ապաւինի: Այլ և այլ կարծիք առաջարկուեցան, բայց վերջապէս փոխարքայն սպասից գատապարտութեան վըճիրը փոխեց պարզ սքսորանաց, առանց զրկելու զիրենք իրենց աստիճանէն, և Արապի վճուղին մնացած մասը չնչեց: Այս գործս Արապի փաշոյի մեծ նուատութիւն մ'էր և իր զօրութեան ակարանալուն նշան. մանաւանդ որ Սուլդանի մէջ ծագած ասպատամբութիւնն օրէ օր առաջ կ'երթար. այս ապատամբաց գլուխ կցած Մոհամեթ, որ ինքնինքն մորգորէ հրատարակած էր, տիրեր էր Տարփուրի և Սենահար քաղաքին, և 8,000 զօրք Գարդումի վըայ կու գար: Եղիպտոսացիք սկսան տրտունջ բառնալ իրենց զօրավարին Արապի գէմ, որ այս կերպով թողով հարաւային Եղիպտական իրկիրները թշնամեաց ձեռքը, զբազած էր փոխարքային հետ վիճելու և գատաստաններ բանալու:

Անդզիւտ և Գաղղիա իրենց նաւերն ուզարկեր էին, որոնք այս ֆամանակիս մէջ բանագատեալ էին Աղեքսանդրից դիմաց անդորդ կ'ենալու: Այս երկու

գաշնակից տէրութիւնք իրենց 'ի գա-
հիրէ եղած գեսապանաց ձեռքով կը սորի-
պէին զփոխարքայն զիջանելու պոյմա-
նաց ինչ, եթէ կ'ուղէր երկու աէրու-
թեանց միջամտութեանն առջև առնուլ.
այս պայմաններէն մին էր նաև աղդային
զրգութեան զիխաւորաց աքսորն, Ա-
րապի և այլց Այս առաջարկութիւնն
զեդիպտապային մէկ հոգւով Արապիի հետ
կը միացընէ, և Արապի Պէյի Գաղղիոյ
դեսպանին հետ ըրած տեսակցութեան
մէջ վերջին խօսքերը կ'ըլլան՝ որ ամե-
նեին կերպով մ'ալ տեղի տալ չուզեր,
բայց միայն բռնութեան։ Ամբողջ Եւ-
րոպայի ուշագրութիւնն իրեն գարձու-
ցեր էր Եղիպատոս։ Անգղիոյ և Գաղղիոյ
դեսպաններն իրենց նաւատորմին հաս-
նելովն աւելի զօրացած, կը պահանջեն
Խրոսիվէն որ առանց դանդաղանաց լու-
ծէ նոր ձևացեալ պաշտօնարանն, պք-
սորէ զիրապի, և սահմանափակ կենաց
պատիժ տայ Մահմետ Պէյի, որ Արա-
պի ընկեր էր և ազգային մասին գըլ-
խաւոր ախոյաններէն մին։ Փոխարքայն
թէվիքի փաշա կը ստիպուի կամայ թէ
ակամայ յանձն առնուլ փուլով այս
պայմանները։ Բայց բովանդակ Եղիպ-
տոս միտօնիք ՚ի կողմն կենալով Արա-
պի կը բողոքէ ընդդէմ վճռոց խրտի-
վի. կը բողոքէ նաև պաշտօնարանն ընդ-
դէմ փոխարքոյին, որ յոնձն առած էր
երկու տէրութեանց առաջարկութիւն-
քը առանց իրեն խորհրդակցութեան,
և կը ստիպէին զիշտիմն ոչ միայն չնշե-
լու Արապիի յաքսորանոց դատապար-
տութեան վճիռն, այլ և իրենց հետ
միանալով՝ մասն կազմելու ազգային
կողման։

Առանց գանդաղանաց բովանդակ
բանակն յայնապէս իրենց զիխաւոր-
ներովն հանդերձ Արապիի դրօւն տակ
կ'անցնի, Աղեքսանդրիոյ բանակին հրա-
մանատարն սպառնալիք կ'ընէ առ փոխ-
արքայն, պահանջելով իրմէն որ անձ-
նասուր ըլլայ, չնորհ ելով իրեն միայն
տասուերկու ժամուան միջոց։ և խրտի-
վըն կը ստիպուի զիջանելու Արապիի
կամաց։ Անգղիոյ և Գաղղիոյ դեսպանք

կը սորիպեն զիքութիվն գրելու առ Առւլ-
դանն, անկարուղ ըլլալով գեռ ևս որո-
շակի գործ մը սկսելու իրենց կողմէն,
Բարձրագոյն Դուռն կ'ուղարկէ իրրե-
քնիշ զՃէրվիշ փաշա։

* *

Գաղղիա այս միջային կ'առաջարկէ
վեց մեծ տէրութեանց վեհապետաց
ժողով մը գումարել 'ի Կ. Պօլիս, Եղիպ-
տական խնդրայն լուծման համար Անդ-
վիա կը միաձայնի մէկէն Գաղղիոյ ա-
ռաջարկութեան, մինչդեռ գերմանիա,
Աստրիա, Ռուսիա և Խոտալիա գրեթէ
անտարբեր պաղութեամբ մը յանձն
կ'առնուն։ Կ. Պօլսոյ ժողովայն բացումն
տեղի կ'ունենայ ՚ի 23 յոնիսի ՚ի Թա-
րապիա, Նախագահութեամբ Գորդի
կոմին իտալացւոյ։ Տաճկաստան պաշ-
տօնական ծանուցումն կը հանէ ՚ի 20
և ՚ի 26 յոնիսի, որով յայտնի կ'ընէ
թէ չի կրնար ընդունիլ իրեն իրաւանցն
հակառակ ժաղով մը, որուն և ոչ իսկ
մասնակցիլ յանձն կ'առնու։ Արդէն
իսկ ժաղովայն սկիզբէն հասարակաց
կարծեաց մէջ, նաև տէրութեանց ան-
դամ կողմանէ, համարում չկար թէ պի-
աի կարենար ժողովն հաստատուն վճիռ
մը տալ ՚ի գարման Եղիպտական խըն-
դրոյն։ Շատ աղէկ ըմբռներ էր զայսնակ
պիզմարք, բայց այս ժողովն զինքն իր
նպատակին հասուց, որ էր բաժնելու
զիաղղիա յինդպիոյ։ Ժաղովականաց
խօսակցութեանն արդինք այս ինչ հա-
տառուեցաւ, որ Տաճկաստան զինուու-
րական զօրութեամբ գրաւէ զիզիպտոս
զայն խաղաղելու և իրեն նախկին վի-
ճակին մէջ պահելու համար։ Բայց Բնչ-
պէս կարելի էր արգեք այս նպատակին
հասնիլ, երբ Եղիպտոսի նախկին վիճա-
կին ծաղեցան իր մէջը տեղի ունեցած
խոռվութիւնք, որ էր Անդպիոյ և Գաղ-
ղիոյ վարչութիւնն գրամական մասին,
որով ծանրացեր էր Եղիպտակաց լուծն՝
մինչն ստիպելու զնոսա յապստամբու-
թիւն։ Թէպէտ և Հուռկ ուրիմն նաև
Բարձրագոյն Դուռն յանձն կ'առնու
մասնակցելու ժողովայն, և ընդունելու

անհնց առաջարկը, բայց մինչև այն ատեն նաև նեգիպատոսի մէջ ինդիրն տարբեր կերպարանք մ'առած էր. որով և ապարդիւն մնաց նաև իր միջամտութիւնն և ժողովյն որոշումներն :

Ինչու համար ուրեմն գումարեցաւ այս ժողովին, ինչ պատճառաւ չկրցաւ գործն առաջ տանիլ, և ինչ արգիւնք ունեցաւ, ահաւասիկ այս հարցմանց պատասխանն :

1. Նախ Գաղղիա և Անդղիա միաբան իրենց նաւերն յԱղեքսանդրիա կուղարկեն, առանց միւս տէրութեանց խորհրդակցութեան :

2. Կը բողքեն միւս պետութիւնք որ Եղիպատոսի խնդիրն վերաբերութիւն ունի նաև իրենց հետ Սուեզի ջրանցից պատճառաւ, որով և իրաւունք չէ մէկ կամ երկու տէրութեանց միայն զայն վճռելու և 'ի գլուխ հանելու :

3. Գերմանիա՝ Դրան հետ զաշնակցեալ և այս բողոքանաց ծածուկ բերան եղած կ'երեեր. բայց շբանեցուց իրենց մասն ստիպիլու զբարձրագոյն դուռն ներկայացուցիչ մը զնելու իրեն, որով ժամանակին չգումարելով ժողովն, չկըրցաւ դարման ընել այն շարեաց՝ ինչ որ իրեն նպատակն էր, և ինչ որ պիտի արդիէր՝ ամենն ալ կատարուեցան, և ինչ որ պիտի զործէր՝ բնաւ բան մ'ալ 'ի գործ չկրուեցաւ :

4. Գաղղիա ետ կը քաշուի եղիպատական խնդրոյն մէջ միաբան գործելու ընդ Անդղիոյ, վախով որ չըլլոյ թէ իր զօրքերն Եղիպատոս ուղարկելով, ուսկից մեծ շահ մը չունէր, գերմանիոյ սահմանակից մասն անպատճապար թողուր. միւս կողմանէ արդէն իսկ շատ մոռածելու նիւթ ունէր դուռնուզին նկատմամբ. ուստի անհամեմատ առաւելութեամբ քուէից մերժուեցաւ մըրէսինէի առաջարկն Սուէզի պաշտպանութեանն համար :

5. Գերմանիոյ ընթացքն արդարացուց գէիծ մի մասամբ Գաղղիոյ բռնած խոհեմ ճամբան. վասն զի Գաղղիոյ Անդղիոյէն բաժնուելէն եաքը՝ գերմանիա և Աւստրիա ոչ միայն դէմ չկեցան

Աղեքսանդրիոյ զնդակակոծութեանն, այլ և ազատ ասպարէզ թողին իր զիտցածն և պատշաճ երեցածն ընելու : Մեր ժուեցաւ նաև իտալացւոց Սուէզի ջրանցից պաշտպանութեան համար ըրած առաջարկն :


6. Երբ վերջապէս Ցանկաստան յանձնուաւ մասմակցիլ ժողովյն որոշմանց, նաև իրեն ներկայացուցիչ մը դընելով, զուրցուեցաւ իրեն որ ժամանակն անցեր էր, և թէ պէտք է որ այսուհետեւ Անդղիոյ հետ յարմարցնէ իր միջամտութեան գործը :

7. Գերմանիա այս ժողովին օգուտ քաղցեց՝ քակերով Անդղիոյ և Գաղղիոյ գանձակցութիւնն : Աւստրիա այս շահնակ ունի որ առանց ընդդիմադրութեան մը երբ ժամանակն յարմար գատի, իրեն պիտի գրաւէ՝ տարածուելով մինչեւ 'ի Սելանիկ' իւր սահմանացին երկրին մի մասն :

8. Հետեանք ժողովյն. — Գաղղիա առանձին կը մնայ, չունելով որ և իցէ կապ ուրիշ ազգաց հետ : Անդղիա միայնակ իր վրան կ'աւանու Եղիպատոսի արշաւանաց նեղութիւններն և շահը: Ուուսիա թուի թէ կերպով մը կ'ուզէ օգնել դրան զննդղիա խոնարհեցընելու և վոսիորի վրայ յարձակելու համար, 'ի գերեւ հանելով Պիզարի բոլոր խորհուրդը. բայց ոչ դուռն կը վստահի իր հին և հաստատուն թշնամույն խոստմանց, և ոչ Ռուսն իր զրութիւնը բաւական կը համարի որոշակի գործ մը սկսելու, որուն ապագայն անծանօթ է և անստոյդ :

9. Ցանկաստան չի կրնար միաբանիլ գրեթէ ինչուան պատերազմին վերջն Անդղիոյ հետ, որուն պայմաններն անպատճութիւն կը բերեն Բարձրագոյն դրան, և իրեն ունեցած ազգեցութիւնը կորսնցնել կու առն ընդհանուր իր կրօնակցաց առջև : Միւս կողմանէ նաև Անդղիա վստահութիւն չունի Ցանկի բանակին առ ինքն ունենալիք հաւատարմութեան վրայ, վախնալով որ ըլլայ թէ իրեն զօրքեն միանան Արապի հետ, որ այս պատերազմն կրօնա-

ԵԳԻՊԵՏՈՒՄՆ ԵՎ ԵՐԵՐ



ԿՈՍՏԱՆԴՐԱԿԱՆ ՀՆԱՊԱԿԱՆ ԱՐԱՐԱՏԻ Վ ՔԱՐԱՎԱՐԻ

Տիղ գումարման Ելրոպական դեսպանատուլըն»

կան մարտ մը քարողեր էր . և ի՞նչպէս կրնար անկէց վերջն իր Հնդկաստանէն բերած գունդերը գործածել , երբ հարկ ըլլար Մահմետական կրօնից դրօշուն հակառակ կոռուիլ . Ուստի և Սլյուսը խստիւ հրաման կ'ընդունի յլնդղիոյ շթողլու բացարձակսկապէս տաճիկ զօրաց յեգիպտոս մանել . բայց միայն հետեւեալ պայմանքը , ողբ են . Ցանկաց բանակն յամենայնի կախումն ունենայ Անդղիոյ բանակին զօրավարէն . իւրաքանչիւր տաճիկ հրամանատրաց և սպայից քով դտնուի նաեւ անդղիացի մը . որ անսուց ընթացքը դիտէ , որպէս զի չըլլայ թէ մատնութիւն մը տեղի ունենայ : Ցանկաստան կ'առաջարկէ իր զօրաց հրամանատրութիւնն յանձնել Խրտիվին , որ Անդղիացւոց կողմն էր , և անոր իրաւանցն պաշտպան ըլլալ . կը մերժուի նաեւ այս առաջարկս , որովհեան Անդղիացի կը կասկածին ծածուկ միարանութիւն մը ընդ Խրտիվի և ընդ Արապիի :

10. Անդղիա առանձին մնալով , մեծամեծ նեղութիւններ կը կրէ : Միւս կողմէն չի կրնար պէտք եղուծ զօրչն հասցընել , որովհետև կը վախիւ իւլսն տայի խսով զիբրէն : իւր այս տկարութենէն կը քաջալերուի Արապիի զօրականն , և կիմային և եղանակին հետ միացած կը տագնապէ զլնդղիացիս , և զիբենք ՚ ջրոյ անդամ կը զրկէ : — Բայց այս գժուարութեանց առնեա առնը լու և յաղթելու կերպը կը մոտածէ Անդղիա . ունի իրեն մեծ քաղաքական հանճարոյն հետ նաեւ մեծ զօրութիւն մը , և ուր զէնք չեն համնիր՝ այս զօրութիւնն կը կատարէ անոնց պաշտօնն . սդեւինաց աստուածն իրեն օգնական է : Նարոլէն առաջնոյն ժամանակէն ՚ ի վեր Անդղիա այսպիսի գժուար զիբրքի մը մէջ չէր ինկած , Անդղիոյ նախանձորք ևս , զոր օրինակ իտալիա . Ուստիա , կը մաղլեն Անդղիոյ զինուց յաջողութիւն , յայտնի տեսնելով թէ ինչ հետեւանք պիտի ունենայ , եթէ Արապի կարենայ յաջողցընել գէթ առ ժամանակի հեռու բունելու զլնդղիացիս

ԳՐԱԿ Գ.

յեղիպտոսէ . որով մէկէն ոտք պիտի ելլէին յունուզի և Ալճերիի ամեն աղգերը , պիտի տարածուէր անհրաժեշտ ապստամբութիւնն նաեւ ՚ի Հնդիկս . միով բանիւ իսլամական ցեղն իրեն կրօնական նախանձայոյդ բոցովը պիտի մրկէր այրէր այխարհիս մէկ մասը : Քաղաքականութիւնն ահաւոր քայլ մը յետո պիտի նահանջէր , և բարբարոսութեան վնասուց և խաւարային իշխանութեան տակ պիտի հեծէն լուսաւորութիւն , զարգացումն , արուեստը և գիտութիւնք :

Բայց կ. Պօլսոյ ժողովը աւարտելու ժամանակ արդէն այս տեսակ վախսեր բոլորովին փարատեր էին . Եգիպտոսուի խնդիրն մեծ յեղափոխութիւն մը կրեր էր , և Անդղիոյ հրանօժից ահաւոր շառաջիւնն ժողովականաց ձայնը խափաներ էր :

*

կ. Պօլսոյ գումարումէն տասուերկու օր առաջ , ՚ի 44 յունիսի , Աղեքսանդրիոյ մէջ արիւնակեղութեանց ահագին և քստմնելի տեսարան մը տեղի ունեցեր էր . և մարդկային կիրք բովանդակ իրենց զաղիր մերկութեամբ ողբերգութեան տեսարանը սկսեր էին : Կոտորածն սկսաւ Ուղիի Փերց կոչուած փողովն մէջ , Յունաց , Մալզէզաց և Արաբաց կոռուվ մը : Յետոյ Արաբաց բազմութիւնն յաճախելով կը սկսին նապուներով և գաւազաններով Եւրոպացւոց ետեէն ընկած ջարդել զանոնք , նոյն փողոցին բերանը գտնուող Դեսպանաց հրապարակին մէջ , որ Աղեքսանդրիոյ կեղրոնական և ամենամեծ հրապարակն է , ուր կը գտնուին գրամափոխից պաշտօնարանն , գլխաւոր խանութեներն , օթևաններն , պանդոկներն , սրճարաններն : Եւրոպացիք ջանացին հրացանի հարուածներով պաշտպաննել իրենք զիբրէնք իրենց տուներէն : Հինգ ժամ միակերպ վայրենաբար տեսեց կոտորածըն ու խոռովութիւնն , և երկու կողմանէ շատ մը մեռնեալք և վիրաւորք մնացին : Վէրք առին նաեւ Գալդիոյ , Անդղիոյ և

17

իտալիոյ գեսպանքն , և ուրիշ պայտունական քանի մ'անդղիացի սպաներ : Վրայ համար եղիպտական գունդն և խռովութիւնը զադրեցուց : Անդղիոյ և Գաղղիոյ նաւատորմիջն իր զօրութիւնը ցամաք չհանեց , մեծագոյն խռովութեան և արիւնչեղութեանց պատճառ չըլլալու համար . միայն մէկէն բողոք ըրաւ առ Սոլդանն , որ հրաման տուաւ փութով իր գործակատար պաշտօնէին Տէրփիշ փաշայի , որ փոխարքային հետ Գահիրէէն Աղեքսանդրիա երթան , ապահովելու զիեանս Եւրոպացոց , պատժելու զյանցաւորս Փոխարքային և Տէրփիշ փաշայի մեկնելով՝ Արապի Պէյ բացարձակ իշխան մնաց Գահիրէի մէջ , և փոխարքայն , Տէրփիշ փաշա և Եւրոպացի գեսպանք յՈղեստանդրիա գնացին աւելի իրենց կեանդը նաւատորմիջն պաշտպանութեան ներքի ապահովելու համար , քան թէ դատաստան կտրելու և յանցաւորները պատժելու :

Կ'արթէ որ մէջ բերենք հօս այս ահաւոր կոտորածին մտնրամասն նկարագիրը , թարգմանելով Աղեքսանդրիայէն գրուած իտալացւյ մը նամակը , որ ականատես և աղետակից եղած էր այն արիւնալից տեսարանին :

«Աղեքսանդրիա , 18, 19 և 20 յունիսի» :

«Ամսոյս 11ին ծագած խռովութիւնն մի և նոյն ժամանակի մէջ սկսաւ քաղաքիս զանազան կողմերը . ուսկից կը հետեւի թէ այս գործն առաջնորդն մոտածուած և կարգադրուած բան մ'էր : Օրուան որոշումը . — Նախընթաց օր Մուսսումի — , կիսաւոր Զին ժամանորութիւնն , նոյնպէս տեղեաց ընտրութիւնն , առաւուտեան գէմ Արաբաց բնակութե կողմերը Եւրոպացի պահանորդաց՝ զինուց և պաշարուց կառօք մը գտնելն , և քանի մ'օրուրնէ 'ի վեր Արաբներուն առ Եւրոպացիս զանոնք գրգռելու համար ըրած թշնամանքն , այս ամենն յայտնապէս կը ցուցընեն թէ կիրակի օրուան 44 յունիսի կոտորածն առաջուընէ մեքենայեալ էր :

«Անհնարին բան է զուրցել թէ ինչ չկարողգործել գաղանացեալ արամն իս ինքն ականատես եղեռնադործ տեսարանացն՝ կրնամ վկայել : Բովսնդակ փերց փողոցին երկայնութեան մէջ Եւրոպացիք նապոներու հարուածներով կը չարչարուէին Արաբներէն . և իրենք զերենք պաշտպանել չկրցողք՝ նոյն հարուածոց տակ կը դեակնանային : Մուսադաֆազիզ (պահապան զօրաց) գունդն խռովարանները կը քաջակերէ , և վեր վար վազելով բովանդակ փերց փողոցն իրենք անձամբ կը նախատէին զեւրոպացիս , և առաջին հրացանի հարուածը իրենցմէ մէկը պարպեց՝ վիրաւորելով չարաշար կերպով Մէսասածէր ինիրսիէն լրագրին խմբագիրը , նոյնպէս նաև թրումպէրդա Մագրին տեսուչը 15 հարուածովք հըրացանի լրացաց վիրաւորեցաւ պահապան զինուորներէն : Խնչուան այս ատեն Եւրոպացիք իրենք զերենք միայն պաշտպանել ջանացեր էին . բայց տեսնելով թէ բանութեան հարկ էր բանութիւն գէմ զնել , շատերը քաջարտութեամբ դուրս ելան տներնէն , զինեալ քարստիկն և որվուշիրներով , և սկըսան կրակ թափել իրենց թշնամեաց վրայ , որոնք էին եղիպտացի պահանորդաց գունդն ձիաւորներու , Արաբներն զինեալք քարերով , նապոներով և որվուշիրներով : Դեսպանք հազիւ թէ եղածն իմացան , իրենց պահապան գօրականքը եկան կուռոյն ասպարիզին մէջ , բայց ոչ ոք զերենք ճանալու գեցեց : Նապուի հարուած մ'ընդունեցաւ նախ իտալացւոց զեսպանն երեսին վրայ , և զանազան վէրքեր բազգաց , ձեռաց և ծնկաց վրայ . Անդղիոյ զեսպանն ծանր վիրաւորուեցաւ երկասցրի զէնքով . նոյպէս վէրք առաւ վզին և բազկայը վրաց Յունաց գեսպանն :

«Միւրա կողմէն խռովութիւնն կը տարածուէր չըրս կողմի մաղերուն և դեսպանաց հրապարակին մէջ : Խանութներն կը կործանուէին և կ'աւերէին , յափշտակիրով մէջի ապրանքներն : Անթիւ անձինք եղիպտական ցեղերու՝ կը

փախչէին լի աւարգք, գլուխներուն վրայ բարձած լաթեզինաց կապոցներ, գըլիւրիներ, թներնուն տակ դրած հոսվացոցներու, գաւազաններու խուրձմը, նոյնպէս նաև կանթեզներ, տուփեր, երկաթէ, պղնձէ և նոյնազգի նիւթերէ շինուած առարկաներ. կարծես թէ տան մը տեղափոխութիւն 'ի դորդ կը դրուէր: — Ամեն կողմն այս ձայնս կը լառէր իտրապ նուսարանի (զարկ քրիստոնէին), Քանի մը տեղ յատակին քարերը քակեցին, Եւրոպացւոց վրայ ձգելու քար գտնելու համար: Դեսպանաց հրապարակին մէջ Հորէլ Խօրոխի առջև սպանուեցաւ Մէրոնի հտաւացին. որուն մարմինը ոտնակոի ընելով քաշկըսեցին փողոցին երկայնութեամբ. կողոպտեցին իր զինարկը, վրայի ըլդգեստները, ժամացոյցը և քովը գըտնուած դրամը, կօշիկները անգամ յարչըտակեցին: Գանզը մատնաչափ լայնութեամբ ճեղքուելով ուղեղը դուրս կը ծորէր:

« Նոյնպիսի պժգալի տեսարանկը կը ներկայանային աշաց դէպ 'ի ծովեզերք տանող ճամրուն մէջ. նաւակներէն դուրս ելլող անգէտ անձինք և ընտանիք, որոնք բազմութեամբ կ'երթային նաւատորմղին այցելութեան, յափըշտակութեանց և սպանութեանց կը հանդիպէին: Անդղիոյ Սիրէրկրս ֆրէկարին ճարտարապետն արվոյզէրի հարուածները ընդունեցաւ. և Տոպսըն եղարք վաճառականք նապուի հարուածներով սպանուեցան:

« Ասուգուած է հիմա՝ որ քաղաքին պահանորդաց զինաւորն ապստամբութեան առաջնորդներէն մէկն էր: Եխառնրդին մէջէն փախչող թշուառականը, իրենց ապաստանարան ինտուած ատենին, կը հրատիրուէին զարդիներէն իրենց յարկացը տակ իրրե ապահովութեան տեղի մը, ուր նոյն զինուոր ներէն կտոր կտոր կ'ըլլային: Չորս յունաց գլուխը կտրեցին. նոյնպէս և իրու-

սի և գաղանի Պէյ իտալացիք, մինչդեռ իրենց կառքին մէջ նստած կը փախչէին, ներս հրատիրուեցան պահապան զինուորներէն, և անգութ մահուան մէնթարկեցան: Գաղանի Պէյի զիսակին զրկուած էր իւր մի մատէն, այնազարդ մատանւոյ մը պատճառաւ. նոյնպիսի շարշարանք և մահ ունեցան շատ մը եւրոպացի պահանորդք և վերակեցրոք: Նոր ձամբուն և Ռոդի Քերց փողոցին ամեն տուներն և խանութներն բուգանդակ կողոպտուեցան: Պետուիններն խումբ խումբ ձեացած կը զիմէին քաղաքին ամեն կողմանքը, կոտորելուն կոչ զոպտելու իրենց առջև հանդիպած Եւրոպացիները: Մինչև հիմա համրուած Եւրոպացի մեռելոց թիւն 200էն աւելի է, իսկ վիրաւորեալք անհամար են: Անհնարին է ստուգել մեռեալ Արաբաց թիւը, վասն զի եթէ մէկը մեռնելու ըլլարը ընկերներն կը ծածկէին զդիկակը: Այս թուէն գուրս են բազմաթիւ Եւրոպացւոց դիակունք, որոնք սպանուելնէն վերջը 'ի ծով կը ձգուէին: Վերջապէս հինգ ժամէն ետքը հասաւ եղիպտական գունդն, դադրեցընելու զիսուութիւնը:

« Այս օրէն 'ի վեր բոլոր խանութները փակուած են. անհամար է գաղթողաց թիւն ¹: նաւերն և նաւակներն չեն բաւեր զփախստականս կրելու, ինչուան նաև առագաստաւոր նաւերն գործածուեցան փոխադրող նաւակներու տեղ: Գահիրէի և բոլոր շրջակայ գեղերուն մէջ գրեթէ Եւրոպացի չէ մնացեր: Մեծ վախ մը կը տիրէ ամեն կողմն, գիշերուան ժամը ծին փողոցները, հրապարակները անապատ կը գառնան: Արճարաններն և ըլմպելիաց տեղուանք փակ են: Վախ կայ նոր ապստամբութեան մը, եթէ նաւատորմղէն զօրական ցամաք ելլեն: Շատերն իրենց տունը զինուք և ամնական պաշարք ամրացուցեր են, նոր յարձակման մը գէմ կենալու, ինչպէս նաև Անգլիա-

¹ Աղեքսանդրիույն եկած ուրիշ նամակ մը կը ժանուարներ, թէ գաղթողաց թիւը մինչև

ցյուլիս 2, կը հասնէր 40,000է, և գաղութք կը շարունակէր »:

Եղիպտական, Օսմաննեան, Գրէտի Լիոննեւ, Եղիպտական դրամասեղանքը գտնուեցան նաև վախերնէն յիմարողներ, Տուրքառոք բոլորովին խափանուած են, դեռապանները խորհուրդ կու տան հեռացընելու, 'ի բաց 'ի քաղաքէն զկանայս և զտղայս : Բազմաթիւ եղեռնադրծք և սպանիչը դեռ ևս անվախ համարձակ քաղաքէն մէջ կը պոլոտին, յորոց մի է և պահանորդաց գլխաւորնու:

* *

Աղեքսանդրիոյ կոտորածէն վերջը, ուրիշ խոսվութիւննք չեն կրկնուիր, և քաղաքն աւժամանակեայ խաղաղութեան, կամ լաւ ևս թմրութեան մը մէջ կը գտնուի: Տէրվիշ փաշա կը ջանայ հաշտեցընել զփոխարքայն և զկրապի. ուստի նոր նախարարց ընտրութիւն կ'ըլլուի. յորում ընտրեալներն ամենն ալ Արապիկի կողմանակիցք են, և ինքն պաշտօնեայ պատերազմի, և իրեն բացարձակ զործերօվնիրեւ զիկտուուր բովանդակ եգիպտոսի: Առ ժամանակ մի Աղեքսանդրիա մայրաքաղաքից կը դառնայ, յորում կը գտնուին Տէրվիշ փաշա, փոխարքայն, նախարարը և 15,000 եղիպտական զօրաց գունդ մը, առ երես խաղաղութիւնն ապահովելու համար, և իրապէս հսկելու փոխարքային վրայ, և պատրաստ ըլլալու առաջին եղիպտոսի վրայ յարձակող բանակաց դէմ զնելու:

Մինչդեռ մէկ կողմէն յինդիա մեծամեծ պատրաստութիւն կը տեսնուին պատերազմի, ձայն հանելով թէ Սուէզի անցիցն 'ի պաշտպանութիւն կը զինի, միւս կողմանէ Արապի կը հրատարակէ՝ որ եղիպտական բանակը պատրաստ է դէմ կենալու որ և իթէ եղիպտոսի վըրաց եկող օտարի մը, եթէ ըլլայ տաճիկ և եթէ երուպացի: Առ այս կ'ամրացընէ զԱղեքսանդրիա, առանց միտ դնելու Անգղիոյ ծովակալին Սիյունուրի բոլորքանաց: Սիյունուր կը բոլորքէ նախ որ Աղեքսանդրիոյ բերդերուն վրայ կատարուած արագ արագ ամրութիւններն

իրեննաւատորմղին 'ի վտանգ էին, ուստի կը պահանջէր որ գադրին այն աշխատութիւններն, սպառնալով գնդակակոծ ելու գքաղաքը: Առ երեսս հնագանդղիլ կը ձեւացընեն Եղիպտացիք, բայց 'ի ծածուկ կը շարունակին իրենց աշխատութիւնները, կը սպառնայ գարձեալ աւելի բուռն պայմանաւ Սիյունուր, առաջարկերով որ իրեն յանձնուին Աղեքսանդրիոյ բերդերը: Եատ կը ջանան Երոպացւոց գեսպանկ միջնորդութիւն ընկերով որ գքաղաքը ահաւոր գնդակական կոծութեան մը դառն կտևեանց չմատնէ. այլ 'ի զուր. երկու կողմէն ալ ետ չկեցան իրենց առաջարութիւննէն: Ուստի նախակնիմթաց օրը 'ի 10 յուլիսի ամեն Երոպացիք և ամեն գեսպանկ թողոցին զքաղաքը, և իւրաքանչիւրին իրենց տէրութեան նաւուց գրոշուն ներք քեա պայմանեցան: Նյոնպէս նսկ ամեն վաճառական և պատերազմիկ նաւեր հեռացան Աղեքսանդրիոյ երկու նաւահանգիստներէն: Մնաց միայն այն ջրոց մէջ անդդիմական նաւատորմիլն՝ ճակատեալ 'ի պատերազմի: Նաւատորմիլն կազմեալ էր տասուերեք նաւերէ, յորոց ութէ հատ զքահապատ և հինգն թնդանօթաձիգ էին, ամենն ալ զինեալ ահաւոր կազմութեամբ:

Առաւտուն գէմ 'ի 11 յուլիսի ծովապետն Սիյունուր կ'երթայ Սիյադը կոչուած զքահապատ նաւուն վրայ, ուր կը բարձրացընէ պատերազմի գրօշը, և նշան կու տայ հրածգութեան, բօվանդակ նաւատորմիլն երկու մաս կը բաժնուի. երեք զքահապատ և հինգ թընդանօթաձիգ նաւերն կը շարուին Հին Նաւահանգստին գիմաց, գնդակակոծելով անոր մնաւըք արգելող բերդերը, նյոնպէս նաև ներքին գաֆարէլլի և Նաբուկուն բերդերը Մնացած չորս զքահաւոր նաւերը կը շարուին նոր նաւահանգստին գիմաց, և կ'անձրեն իրենց գնտակները Այստա և Սիդէ և ուրիշ երկու բերդերու վրայ, Անյադր նաւն մէկ մը մէկ կողման, մէկ մը միւս կողման մօտ վազերով, անոնց զարհուրելի ուսումներուն հետ կը միացընէ նաև

իրեն որվողվեր—քնդամօրից տեղատարափ գնակալները:

Գնդակակոծութիւնն սկսելով առաւտօնեան ժամը վեցին՝ տեսեց մինչև կէս օրէն վերջը ժամը չորս ու կէս, յորում երկու կողմէն ալ մնդանօժները լուծ էին: Չօրս բերդեր օդ ելեր էին, և Ռասէլդին մեծ պալատն բոցերով շրջապատեալ էր: Նյոն օրուան մէջ Անդդիացիք 5 մեռեալ ունեցան, և 28 վլրաւոր: Քանի մը նաւաստիք լրզալով մազըցի ելան Այիստա բերդին վրայ, և ուժ թնդանօթ գամեցին:

Բովանդակ գիշերն անցաւ առանց աղադակին: Աղեքանդրիա, կը զբէ թըղթագիր մը, լուութեան և խաւարի մէջ թաղուած էր, երկու կամ երեք նուազ և շարժուն լուսոյ նշոյք կը ցուցընէին անոր տեղը. փարոսներն խաւարի մէջ էին, գիշերուան սև մժութեան մէջ կը փայէր միայն իտասէլդին պալատին բոցավառ ահաւոր տեսարանն ։ :

Երկրորդ օրն (չորեքշաբաթի) սկսան դարձեալ հրածգութիւնք. բայց ծովեղերքի մնդանօթք փոխանակ պատասխան շտուին: Քեր էին զանոնք: Այն ատեն ուումբներն սկսան ներքին բերդերոն վրայ տեղալ, որք են նարուկոն, գաֆարէլի, գաբարի, և այյն: Բնականապէս ուումբներն ինկան նաև քազաքին վրայ, և առաւօտուընէ սկսեալ ու ծխոյ սինակներ սկսան քազէն յերկինս բարձրանալ, իմացընելով թէ հրդեչն սկսած էր ճարակիլ անցագութեամբ:

Ժամը տասն ու կիսուն նաւարանին վրայ սպիտակ զրօյն ամբարձաւ: Իրակը գադրեցընելով՝ Հելիկոն լրաբեր նաւու դէպէ ի՞նաւահնանդիստ ուզարկուեցաւ ճերմակ դրօշով: Սպայ մը Մամրուս սա նաւուն վրայ ելաւ, բայց մի կենդանի անձն շտեսաւ հօն. և դարձաւ ՚ի նաւատորմն:

Այն մահագոյդ լուութիւնն շընդհատեցաւ ամբողջ օրուան մէջ: Յաջորդ օրը (հինգշաբաթի) սկսաւ գարձեալ գնդակակոծութիւնն: Ուրիշ բազմաթիւ ճերմակ դրօշներ բարձրացան քա-

զափին տանեաց և աշտարակներուն վըրայ: Դարձեալ Հելիկոն նաւն դէպէ ՚ի ցամաք գնաց: Խօսեցաւ սպայ մը տեղոյն հրամանատարին Դուլպա փաշայի հետ, զովելով եղիպտացի հրազինուց թշուառ քաջութիւնն, և պահանջելով բերդից անյապազ անձնատրութիւն: Պատասխան տուաւ դուլպա թէ կ'ուզէր իմացընել զայն իր տէրութեան, որ ՚ի Բամիէ քաշուած էր: Անգզիացիք չուզեցին մտիկ ընել, ետ զարձան:

Եւ ահա բազմութիւն մը երոպացոց, գոյներնին նետած, արիւնաշաղախ, գիսախոփի դիմեցին դէպէ ՚ի նաւն Անգզիացոց, պատմելով այն երեք օրերուն մէջ ՚ի քաղաքն հանդիպած սոսկալի արկածները: Արապի փաշա անօգուտ տեսնելով այլ ես որ և իցէ ընդդիմադրութիւն, հրաման տուաւ զօրաց ետ քաշուելու: Արդէն Անգզիացոց գնտակները քաղաքին զանազան կողմերը բռնկցուցեր էին: Արտապիի բանակին մեկնելն վերջը, խառնիճաղան ժողովուրդը, կատղած, սովեալ, և բազմապատկեալ անապատին Պետուիններէն և ազատեալ դատապարտեալներէն, զիմեց փողոցներուն մէջ կոտորելով, սպանանելով, կողոպտելով, այլիշելով ինչ որ եւրոպական անուամբ գտնէր իր առջևն: Հազարի չափ եւրոպացիք ամբափակեալ Օսմաննեան Փանիքսին մէջ ճգնաժամ և յուսահատական քաջութեամբ դէմկութեան բայց անօգուտ, մինչև յետինն սպանուեցաւ. հազիւհարիւրի չափ երոպացիք զէնքերնին ձեռքերնին կրցան ազատեալով ճամբայ մը բանալ և Անգզիացոց նաւն ապատանիլ: — Դարձաւ Հելիկոն նաւն այս լուրերով և ազատեալներով առ նաւատորմիլն: Մարսուա մը տիրեց ամեն լսողաց վրայ: մանաւանդ երբ գիշերուան մէջ աչաց առջև ներկայացաւ բոցելէն ալեք ծով մը ընդգարձակ տարածութեամբ: Աղեքանդրիտ կը հրդէհէր:

Երկրորդ առաւօտը Անգզիացիք ցամաք ելան և կամաց կամաց սկսան աւերակացեալ քազաքին մէջ յառաջելի իրենց առջեր կը ներկայանայր ամեն

մէկ քայլին նորանոր աղետալի տեսա-
րաններ։ Անդիացւոց հետ իջան ցա-
մաք նաև բազմութիւն գերմանացւոց,
Գաղղիացւոց, Յունաց և Ամերիկացւոց,
բայց յետոյ վերագարձան 'ի նաւու;
Հուսկ ուրեմն հրդեհն մարեցաւ՝ երբ
դրեթէ ալ նիւթ չէր մնացեր այրելու.
Աղեքսանդրից երեք մասէն երկուքը
միխրոյ կյուտ մ'էր դարձեր, Ծովապետն
Ալյուուր պաշտրման վիճակի մէջ հրա-
տարակեց զԱղեքսանդրիա։

Դժբախտ փոխարքայն թէվֆիք գրե-
թէ հրաշքով կրցաւ իր կեանքն աղա-
տել։ Գնդակակութութեան սկիզբէն 'ի
վեր զինքը գերի ըրած և փակած էին 'ի
Ռամիէ, հեռու պալատի մը մէջ։ Կա-
շուռելով պահապանները կրցաւ աղա-
տիլ և յԱղեքսանդրիա գառնալ Անդ-
դիացւոց ներս մտնելէն վերջը. որոնք
իրեն թիկնապահաց գունդ մը նորհե-
ցին։ Արագի իր զօրքերով դէպ 'ի Գա-
հիրէ ետ քաշուեցաւ, և սկսաւ նորա-
նոր զօրաց գումարումներ ընել։

Փոխարքայն՝ Ալյուուրի պահանջելով՝
ապստամբ հրատարակեց զԱրապի և ա-
նոր զօրականն. 'ի հակառակէն նաև Ա-
րապի Գահիրէի մէջ բազմութիւ եգիպ-
տացի մեծամեծաց ժողով մը գումա-
րելով, ինքն զինքն ազատ հաշակեց Խը-
տիմի հնազանդելու պարտքէն, և ըզ-
փոխարքայն մատնիչ հայրեննեաց և կա-
շուռեալ յԵւրոպացւոց հրատարակե-
լով՝ կրօնական պատերազմն կը քարո-
զէ։ Այս միջոցին Անդգիոյ բանակն Ռւլդ-
լյա զօրավարին առաջնորդութք դէպ 'ի
Գահիրէ կը սկսի յառաջել։ Արապիի
զօրքերը կը բանակին Գաֆր-էլ-Դուար
բարձրութեան վրայ, որ իր գրիւքը կը
տիրէ դէպ 'ի Գահիրէ առաջնորդող ա-
մեն ճամբաններուն վրայ։ Նիլոսի ողող-
մունքն, երկրին բնիկ ըլլան և եղանա-
կըն՝ իրեն մեծապէս 'ի նպաստ են։ կը
կտրէ նաև յԱղեքսանդրիա ըմպելի ջուր
տանող ճամբանները։ Թէպէտ և միշտ
Անդգիոյէն նորանոր բանակներ կու-
գան, որոնց գալուվը բանակը 16,000ի
կը հասնի, բայց նաև միւս կողմէն հի-
ւանդութիւնք և ջրոյ պակասութիւն

սաստիկ կերպով կը նեղեն զԱնդդիքա-
ցիս, ամեն օր 30-40 անձինք կոտորե-
լով բանակէն։ Այս միջոցիս նաև ուրիշ
զօրաւոր ձայն մը իր բողոքը բարձրա-
ցուցեր էր ընդդէմ Անդգիոյ։ Հոչակա-
ւորն լեսսէրս, 'ի պաշտպանութիւն ա-
զատութեան ջրանցից Սուէզի։

Բարձրագոյն դուռն կ. Պօլոյ ժողո-
վյն որոշման համեմատ՝ Տէրկիչ փաշայի
հրամանատարութեան տակ՝ բանակ մը
կը պատրաստէ ուղարկելու յԵղիպտոս,
և կ'առաջարկէ Անգվիոյ որ ետ քայուի
երբ իր զօրքերն հասնելու ըլլան։ Անդ-
դիա այն ատեն միայն յանձն կ'առնու-
ծաճկաստանի բանակին գալուստը,
երբ սա իր հրամանատարաց իշխանու-
թեան ներքեւ շարժելու ըլլայ. և ընդ-
հակառակն՝ ինքը կը պահանջէ Դռնէն
որ զԱրապի պատամբ հրատարակէ։
Անգվիոյ բանակը կը սկսի գործել.
Քիչ օրուան մէջ Սուէզ, իսմայիլիա՝ Անդ-
դիացւոց ձեռքը կ'անցնին։ Արապի ըզ-
փահիրէ կ'ամրացընէ, բայց Ռւլդէյ ժա-
մանակ չի ժողուր ժնամամոյն. Սուէզի
ջրանցքն կտրելով 'ի Գահիրէ կը դիմէ։
Ամենայն ինչ կը լրէ. Վեհամողովն,
Դրան միջամտութիւն, Եւրոպացւոց
միջամտութիւն, լեսսէրս, և այլն. միայն
հրանութից բոմբիւնը կը լսուի։ Ուզ-
լէյ Զակազիկի վրայ յարձակելու պատ-
րաստութիւն տեսնելով, տասնունինդնագ-
օրուընէ 'ի վեր բովանդակ իւր զօրու-
թիւնը կը ժողովէ 'ի Գասսամին, ընդ-
դէմ եղիպտական բանակին որ կը բա-
նակի 'ի թէլ-էլ-թէպիր։ Ուզլէյ ունի
13,000 հետեւակ, և 5,000 ձիաւոր, 'ի
բաց առեալ բազմութիւ թնդանօթա-
ձիգ զօրականներն։ Նաև Արապիի զօ-
րութիւնն ալ շատ մեծ է. բաց 'ի կանո-
նաւոր զօրքէն, բազմաթիւ բանակ մը
ունի Գետուիններու, որոնց թիւը ումանք
ինչուան 40,000ի կը հանէլն, և այլք
80,000ի։

Ամբողջ եղիպտական խնդիրն թղթէ
ձեացուած շինուածի մը նման թէլ-էլ-
թէպիրի յաղթութեամբ ինկաւ կործա-
նեցաւ սեպտեմբեր 13ին, յորում Անդ-

զիացւոց բանակն տէր եղեր էր Արապիի բանակատեղւոյն . զոր թողուցեր էին Եգիպտացիք առանց դիմազրութեան : Աղեքսանդրիայէն զրուած նամակ մը 'ի 19 սեպտեմբերի կը ծանուցանէ , որ և Արապիի կործանումն ոչ թէ ետք քաշուիլ մ'եղաւ , այլ անկանոն և գահավիժք փախուստ մը » :

Նոյն օրուան մէջ Անդղիացիք տիրեցին Զակաղիկի և ուրիշ ամրութեանց . երկրորդ օրն հեռուէն երեցան Գահիրէի ոսկեզօծ գմբեթաց գագաթմունքն և մինարէից ծայրերն . երեկոյեան ժամը 6ին բանակն 'ի Գահիրէ մտաւ յաղթանակօք , ողջունուելով քաղաքին մեծամեծներէն , որոնք մէկէն Հնազանդութեան ցոյց սուսին : Արապիի բանակին մասցրուներն Անդղիացւոց ձեռքն ինչան . Արապի և իւր ընկերներն առանց դէմ զնելու անձնատուր եղան , և 20 հատի շափ ապստամբ զիխաւորաց հետ Աղեքսանդրիա տարուեցան Սեպտեմբերի 15ին Ռւզլէյ , ըստ իրեն առաջուց առած խոստման , յաղթութեամբ մըտաւ 'ի Գահիրէ , և հեռագրեց 'ի Լուտրա և Պատշերազմն աւարտեցաւ » : Արապիի այս յանկարծական կործանումն բոլոր աշխարհ զարմացմամբ լեցուց : Թէլլ-էլ-Քէպիրի պարտութիւնն միացաւ Գաֆր-էլ-Դուարի անձնատրութեան հետ . առանց Անդղիացւոց յար-

ձակմանն սպասելու , հրամանատարն Մուսղափաքա անձնատուր եղաւ վուազուրագիսին : Փոխարքայն ձեռք առնուղի իրեն յԱնդղիացւոց պարգևեալ իշխանութեան վարչութիւնը , իրբն առաջին միջոց ապահովութեան , լուծեց եղիպտական բանակը : Բոլոր Արապիի կողմանակիցը իրենց զէնքերն յանձնեցին : Փոխարքայն իրեն արքունիքն դառնալով 'ի Գահիրէ , մեծ հանդիսիւ ընդունուեցաւ . և անդէն սկսաւ ետեէ ըլլալ եղած աւերմանց դարման տանելու :

Ուղլէյ և Սիյամուր երկուքն ալ Անդղիոյ տէրութենէն 'ի վարձ իրենց արժանեացն՝ Լորտից խորհրդարանին անդամ ընտրուեցան՝ պարուն շրագիր անունն ստանալով :

Այսպիսի ժատերական վերջ մ'ունեցաւ ահա Եգիպտական խնդիրն . զոր ապագայ պատմիչը 'ի զիր զրոշմելու ատեն , Անդղիացւոց քաջարտութեան , Եգիպտացւոց յուսահատ և Վայրենի ճգանց հետ պիտի չմոռնան , թաթաւելով իրենց գրիխն անթիւ անմեղ արեանց և արտասուաց մէջ , արձանացընելու յապագայ գարս նաև անոնց արդարացի բողոքն՝ ընդդէմ արիւնարբու կրից մարդկութեան :

Հ . Ա . Թ .

Եղովուն յատակն .— Միջերկրականն , որ մեծաթիւ կղզիներ և աւազակոյտեր ունի , խիստ անհաւասար յատակ մը կը ներկայացընէ , ծածկուած աւազով անդղով մէջ , և տղմով կամ կենդանաբոյուն շներով փոքրագոյն խորութեանց մէջ : Քանի մը տեղեր , մանաւանդ 'ի սիկիլեան Արշիպեղագոսին , յատակն սեպաձեւ կը բարձրանայ , մինչև գրեթէ երեսը , հերձեալ 'ի բաղմանթիւ ժայռու : Մալթայի և կրեսէի մէջ եղած խորութիւնն մեծ է , ուր խորաչափն կը հասնի 3900 մեղրի . կրետէի և կիպրոսի մէջ 2000ի : Աղրիական աւելի ցած է , զանազանելով 100էն մինչև 200 մեղր հիւ-

սիսային կողմերը . սակայն դէպ 'ի Գագրայ , անդունդն մինչև 1400 մեղրի կ'իշնէ : Խտալից արևմտեան կողմերը մեծագոյն խորութիւնն հազիւ 200 մեղրի կը հասնի : Ընդ մէջ Աղրիկէի , Սպանիոյ , Սիկիլիոյ , Սարտենիոյ , Գաղղիոյ , յատակը կը տարբերի 1000էն մինչև 2000 , ի մեծագոյն խորութեանէ խորաշափով վեր բեր բերած կենդանաբոյով շատ դոյջնագիւտ են , այլ աղմային մասին մէջ կը յորդեն խօգք , ջրիմնուք , ոսկրեղէն ձկոնք , աճառապատք , ծովաստեղք , գլխան ձկունք , գորդոնայք , ոզնիք , մեղուսայք և առ հասարակթուլատարեքք :